Արձանագրություն N 2

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար «Գրասենյակային և կենցաղային կահույքի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/13-01» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «18» մայիսի 2016թ.
Ժամը՝ 10:30

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Սարգիս Արմենակյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ **ԳՊ/ԳԱՊ**) Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

հանձնաժողովի անդամներ՝

Աղավնի Բուդույան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**) Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի,

Անահիտ Ավագյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**) Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

Արման Ղուկասյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**) Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար:

հանձնաժողովի քարտուղար՝

Մարիամ Հայրապետյան (Գնման Պատասխանատու/Մրցույթի համակարգող՝ **ԳՊ/ՄԻՄ**) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

Նիստից բացակայում է հանձնաժողովի անդամ Կարեն Մելքոնյանը (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար:

1. «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/13-01» ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտերի բացման մասին.

1.1 Հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգի /այսուհետ՝ Համակարգ/ միջոցով 2016թ.-ի մայիսի 18-ին, ժամը 10:30-ին:

2. Տեղեկատվություն գնման առարկայի ընդհանուր /նախահաշվային/ գնի վերաբերյալ.

2.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի/այսուհետև՝ Կարգ/ 44-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման առարկայի ընդհանուր գինը՝ մեկ թվով արտահայտված.

Հ/Հ	Չափաբաժնի անվանումը	Գնման առարկայի ընդհանուր գինը՝ մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ)
1	Սեղան՝ ղեկավարի (գրասեղան՝ 1-պահարանի, տակդիր՝ հեռախոսի, սեղան՝ դիմադիր՝ փոքր)	1,280,000
2	Աթոռ՝ գրասենյակային, մետաղյա կարկասով	864,000
3	Աթոռ համակարգչային	468,000
4	Բազկաթոռ ղեկավարի	1,200,000
5	Նստարաններ	2,144,000
6	Գրասեղաններ	640,000
7	Գրասեղաններ	320,000
8	Գրասեղաններ	880,000
9	Գրապահարաններ	640,000
10	Գրապահարաններ	960,000
11	Զգեստապահարաններ	640,000

3.1 Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

N	Մասնակցի անվանումը	Գտնվելու վայրը, հեռախոսահամարը
1	«Ֆոտոն» ՍՊԸ	ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Վ. Սարգսյանի փող. 2. 14, բն.21, Հեռ. (043)109530
2	«ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ	ք. Երևան, Վարդանանց 110 Հեռ. (010) 558483
3	«Զորաշեն» ՍՊԸ	ք. Երևան, Աշտարակի խճ. 2 բ Հեռ. (099)415880, (055)959585
4	«Հայր և Որդի Գյոդակյաններ» ՍՊԸ	ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Փանյան 1 Հեռ. (091) 418659

5	«Ալեն-Էլեն» ՍՊԸ	ՀՀ, Արմավիրի մարզ, Սարդարապատ 20փ, թիվ 2 Հեռ. (093)887728
6	«ՍԵՆԴԱ» ՍՊԸ	ք. Երևան, Հր. Քոչարի 8/16 Հեռ. (091)416154
7	«Սեմանգ» ՍՊԸ	ք. Աշտարակ, Գրիգորյան 24 Հեռ. (091)211912
8	«ՋՈՒԼԻԱՆՆԱ» ՍՊԸ	ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Թաիրով, Մայրաքաղաքային 206, 208 Հեռ. (+374) 77837703; (+374) 60400008

3.2 Համակարգում 06.05.2016թ.-ի դրությամբ գրանցված մնացած բոլոր հնարավոր մասնակիցները հայտեր չեն ներկայացրել:

4. Մասնակիցների ներկայացրած հայտերի ուսումնասիրության նպատակով հանձնաժողովը որոշեց նիստը հետաձգել և հաջորդ նիստը հրավիրել 2016թ. մայիսի 19-ին ժամը՝ 11:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ _____ Սարգիս Արմենակյան

Անդամներ՝ _____ Աղավնի Բուդուլյան

_____ Անահիտ Ավագյան

_____ Արման Ղուկասյան

Քարտուղար՝ _____ Մարիամ Հայրապետյան